ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
Ծառայությունների մատուցման
N 05/10/22

ք. Երևան «03» հոկտեմբերի 2022թ.

«Կարեն Դեմիրճյանի անվան մարզահամերգային համալիր» պետական ոչ առևտրային կազմակերպությունը, ի դեմս տնօրեն Կարեն Ղազարյանի, ով գործում է կազմակերպության կանոնադրության հիման վրա, (այսուհետ՝ «Կատարող»), մի կողմից, և «Առողջապահության նախարարությունը» (այսուհետ՝ նաև Պատվիրատու), ի դեմս գլխավոր քարտուղար Վարդանուշ Գրիգորյանի, ով գործում է Պատվիրատուի կանոնադրության հիման վրա մյուս կողմից, (երկուսը միասին այսուհետ՝ նաև Կողմեր), կնքեցին սույն Պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Սույն պայմանագրով Կատարողը պարտավորվում է Պատվիրատուի հանձնարարությամբ մատուցել սույն պայմանագրի Հավելված 1-ում նշված ծառայությունները, իսկ Պատվիրատուն պարտավորվում է վճարել այդ ծառայությունների համար՝ սույն պայմանագրի 4.1 կետի համաձայն:

1.2 Ծառայությունները մատուցվում են պայմանագրի Հավելված 1-ով սահմանված Տեխնիկական բնութագրին համապատասխան և սահմանված ժամկետներով:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐՆ ՈՒ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1. ***Կատարողը պարտավոր է՝***

2.1.1.Ծառայությունները մատուցել պատշաճ որակով:

2.1.2.Ծառայությունները մատուցել ամբողջ ծավալով, սույն Պայմանագրի Հավելված 1-ում նշված ժամկետում.

2.1.3.Մատուցվող Ծառայությունների վերաբերյալ Պատվիրատուի գրավոր և բանավոր առարկությունները ստանալուց հետո ոչ ուշ քան մեկ ժամվա ընթացքում վերացնել թերությունները՝ տեղեկացնելով Պատվիրատուին:

2.1.4 Պատվիրատուի կողմից միջոցառման շրջանակներում և միջոցառման ապահովման նպատակով համապատասխան սարքերի և սարքավորումների տեղադրման նպատակով միջոցառման անցկացման օրվանից առաջ Պատվիրատուի կողմից ներկայացված ցուցակում նշված անձանց մուտքի թույլտվության տրամադրում Մարզահամերգային համալիրի ճեմասրահի, նրան հարակից տարածքների, հարակից բակային տարածքների, համերգային դահլիճի և նրան հարակից սեմինար դահլիճների, սպորտային դահլիճի և 7-րդ հարկի կլոր կոնֆերանս դահլիճի տարածք՝ սույն պայմանագրին կից Հավելվածի 1-ով նախատեսված ժամերին:

2.2. ***Կատարողն իրավունք ունի՝***

2.2.1. լուծել պայմանագիրը 4.1 կետով նախատեսված վճարումները նույն կետով սահմանված ժամկետում չկատարելու (ուշացնելու) դեպքում.

2.2.2.պահանջել Պատվիրատուից հատուցել Կատարողի կողմից տրամադրված գույքին (այդ թվում սարքերին, սարքավորումներին, շենքերին, շինություններին և այլն) պատճառված վնասը, որը գնահատված է անկախ փորձագետի կողմից:

2.2.4 Պատվիրատուի նախաձեռնությամբ և/կամ մեղքով սույն Պայմանագրին կից Հավելված 1-ով նախատեսված միջոցառման իրականացումը տեղափոխելու դեպքում Պատվիրատուից գանձել տուգանք Պայմանագրի գնի 20 տոկոսի չափով:

2.3. ***Պատվիրատուն պարտավոր է՝***

2.3.1. Ծառայությունների դիմաց վճարել սույն Պայմանագրի 4-րդ կետում և սույն Պայմանագրի Հավելված 1-ում նշված կարգով, ժամկետներում և գնին համապատասխան.

2.3.2. որևէ կերպ չխոչընդոտել Կատարողի Ծառայության մատուցմանն ուղղված օրինաչափ գործողություններին.

2.3.3. Միջոցառումը կազմակերպել և իրականացնել Պայմանագրի պայմաններին և Մարզահամերգային համալիրի շենքի գործառնական նշանակությանը համապատասխան.

2.3.7 Միջոցառման օրերին տարածքում ապահովել շտապ օգնության անձնակազմի ներկայություն:

2.3.8 փոխհատուցել Կատարողի կողմից տրամադրված գույքին (այդ թվում սարքերին, սարքավորումներին, շենքերին, շինություններին և այլն) պատճառված վնասը:

2.4. *Պատվիրատուն իրավունք ունի՝*

2.4.1. ստուգել Կատարողի կողմից մատուցվող Ծառայությունների ընթացքը և որակը.

2.4.2.Կատարողի կողմից Ծառայությունները ոչ պատշաճ, կետանցով, ոչ լրիվ ծավալով մատուցելու դեպքում Կատարողից պահանջել 1 /մեկ/ ժամվա ընթացքում վերացնելու թերությունները:

3. ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Մատուցված ծառայության ընդունումը հաստատվում է Պատվիրատուի կողմից Կատարողի ներկայացրած հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ:

3.2 Եթե մատուցված ծառայությունը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Պատվիրատուն հանձնման-ընդունման արձանագրությունը՝ Հավելված 2, և ԱԿՏ-ը՝ Հավելված 3-ը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 3 (երեք) աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում է այն (հաստատում է):

3.3 Եթե պայմանագրի 3.2 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում մատուցված ծառայությունը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատուցված ծառայությունը համարվում է ընդունված:

4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ

4.1. Սույն Պայմանագրի գինը կազմում է 24 000 000 (քսանչորս միլիոն) ՀՀ դրամ ներառյալ ԱԱՀ-ն, որը, Պատվիրատուն պարտավորվում է վճարել Հավելված 1-ով սահմանված ծառայությունների մատուցման հանձնման-ընդունման արձանագրությունը երկկողմանի ստորագրելուց հետո 3 աշխատանքային օրվա ընթացքում:

4.2 Սույն պայմանագրի 4.1 կետով. նախատեսված վճարումները նույն կետով սահմանված ժամկետում չկատարելու (ուշացնելու) դեպքում Պատվիրատուից կարող է գանձվել տուժանք՝ սույն Պայմանագրի գնի 0.5 տոկոսի չափով՝ յուրաքանչյուր ժամկետանց օրվա համար՝ 0,05 տոկոսի չափով:

***5.* ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԴԱԴԱՐԵՑՄԱՆ ԿԱՄ ՎԱՂԱԺԱՄԿԵՏ ԼՈՒԾՄԱՆ ՀԻՄՔԵՐԸ և ԿԱՐԳԸ**

5.1.Պատվիրատուն իրավունք ունի հրաժարվել սույն Պայմանագիրը կատարելուց՝ Կատարողի փաստացի կատարած ծախսերը և սույն Պայմանագրով նախատեսված տուժանքներն ու տուգանքները վճարելու պայմանով:

5.2 Կողմերն իրավունք ունեն գրավոր փոխադարձ համաձայնությամբ լուծել սույն Պայմանագիրը՝ Պայմանագրի Հավելված 1-ով սահմանված միջոցառման օրվանից ոչ ուշ քան 5 աշխատանքային օր առաջ, այլապես, Կատարողը կարող է պահանջել Պատվիրատուից սույն Պայմանագրի շրջանակներում կատարված աշխատանքների և ծառայությունների փոխհատուցում:

6. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

6.1 Կողմերը որևէ պատասխանատվություն չեն կրում մյուս Կողմի՝ սույն Պայմանագրով սահմանված պարտավորությունների իրականացման ընթացքում, Կողմի կողմից թույլ տված երրորդ անձանց իրավունքները խախտող գործողությունների համար:

6.2.Սույն Պայմանագրով նախատեսված պարտականությունները չկատարելու կամ ոչ պատշաճ / թերի կատարելու արդյունքում խախտող Կողմը պատճառված վնասը հատուցում է մյուս Կողմին Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

6.3.Վճարները և/կամ Միջոցառումը ուշացնելու և/կամ չիրականացնելու և/կամ որևէ այլ գործողությամբ Կատարողին վնաս պատճառելու դեպքում Պատվիրատուն պատասխանատվություն է կրում Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված և սույն Պայմանագրով նախատեսված կարգով և չափով:

6.4. Տույժերի և/կամ տուգանքների և/կամ վնասների հատուցումը Կողմերին չի ազատում սույն Պայմանագրով ստանձնած իրենց պարտականությունները կատարելուց:

6.5. Պատվիրատուն պատասխանատվություն է կրում Միջոցառման իրականացման և/կամ կազմակերպման ընթացքում Պատվիրատուի և/կամ մասնակիցների կողմից Կատարողին պատճառված բոլոր տեսակի վնասների համար:

6.6. Պատվիրատուն պարտավոր է Միջոցառումը կազմակերպել և/կամ իրականացնել Հայաստանի Հանրապետության (ներառյալ, բայց չսահմանափակվելով՝ մտավոր սեփականության օրենսդրության մասին) օրենսդրության պահանջներին համապատասխան:

6.7. Պատվիրատուն պատասխանատվություն է կրում Միջոցառման իրականացման և/կամ կազմակերպման ընթացքում Հայաստանի Հանրապետության օրենսդրության պահանջների խախտման համար:

6.8 Պատվիրատուի նախաձեռնությամբ և/կամ մեղքով սույն Պայմանագրին կից Հավելվածով նախատեսված միջոցառումը չեղարկելու դեպքում, բացառությամբ սույն պայմանագրի 5.2 կետով նախատեսված դեպքերի, Ծառայության առաջին փուլում վճարված կանխավճարը ենթակա չէ վերադարձման:

7. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով և սույն պայմանագրի հիման վրա կնքված համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար Կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը Կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա Կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս Կողմին:

8. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

8.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև Կողմերի պայմանագրով ստանձնած պարտավորությունների ամբողջ ծավալով կատարումը:

8.2 Պայմանագրից ծագած Կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան Կողմի գրավոր համաձայնության:

8.3 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

8.4 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում Կողմերի (Կատարող կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ Կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի Կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կատարողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կատարողը:

8.5 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են ՀՀ դատարաններում:

8.6 Սույն պայմանագիրը կազմված է __ (չորս) էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր Կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

8.7 Սույն պայմանագրի նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությունը:

9. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՏԱՐՈՂ
ՀՀ առողջապահության նախարարություն	**«Կարեն Դեմիրճյանի անվան մարզահամերգային համալիր» ՊՈԱԿ**
Հայաստանի Հանրապետություն, ք. Երևան, 0010, Հանրապետության հր., Կառավարական տուն 3	հասցե՝ ք. Երևան, 0028, Ծիծեռնակաբերդի զբոսայգի 1
ՀՎՀՀ՝ 02507171	ՀՎՀՀ՝ 00144572
Բանկ՝ թիվ 1 տարածքային գանձապետական բաժին	Բանկ՝ թիվ 1 տարածքային գանձապետական բաժին
Հ/Հ՝ 900011041218	Հ/Հ՝ 900018002825
ՀՀ ԱՆ գլխավոր քարտուղար՝	Տնօրեն՝
---------- Վարդանուշ Գրիգորյան	---------- Կ. Դանիելյան
(ստորագրություն)	(ստորագրություն)

Հավելված N 1
« 03 » հոկտեմբերի 2022 թ. Կնքված
Թիվ 05/10/22 պայմանագրի

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ

Ծառայության				
Ծառայության անվանումը	տեխնիկական բնութագիրը	ընդհանուր գինը/ՀՀ դրամ	մատուցման	
			Հասցեն	Ժամկետը**
Միջոցառման կազմակերպման համար տարածքի տրամադրման սպասարկման ծառայություն	*1. «Կարեն Դեմիրճյանի անվան մարզահամերգային համալիր» Մարզահամերգային համալիրի ճեմասրահի, հարակից տարածքների, հարակից սեմինար դահլիճներում, և 7-րդ հարկի կլոր կոնֆերանս դահլիճի՝ 12 աթոռ տարածքի՝ սպորտային դահլիճի տարածքում ԱՀԿ համաժողովի միջոցառման կազմակերպման հետ կապված ծառայություններ*	*24 000 000 (քսանչորս միլիոն) ՀՀ դրամ*	«Կարեն Դեմիրճյանի անվան մարզահամերգային համալիր» Ծիծեռնակաբերդի զբոսայգի, 1 շենք	04.10.22-08.10.22թթ

Սույն Հավելված 1 Տեխնիկական բնութագրով նախատեսված Ծառայությունները ներառում են՝

Միջոցառման ացկացման համար 04.10.2022թ-ից մինչև 08.10.2022թ ժամը 09^{00}-ից մինչև 19^{30} սույն Հավելվածի աղյուսակում նշված տարածքների տրամադրում, և կոմունալ սպասարկում:

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՏԱՐՈՂ
ՀՀ առողջապահության նախարարությունՀայաստանի Հանրապետություն, ք. Երևան, 0010, Հանրապետության հր., Կառավարական տուն 3 ՀՎՀՀ՝ 02507171 Բանկ՝ թիվ 1 տարածքային գանձապետական բաժին Հ/Հ ՀՀ ԱՆ գլխավոր բարձրագույն՝ Վարդանուշ Գրիգորյան ---------- (ստորագրություն) Կ.Տ.	«Կարեն Դեմիրճյանի անվան մարզահամերգային համալիր» ՊՈԱԿ Հասցե՝ ք. Երևան, 0028, Ծիծեռնակաբերդի զբոսայգի 1 ՀՎՀՀ՝ 00144572 Բանկ՝ թիվ 1 տարածքային գանձապետական բաժին Հ/Հ՝ 900018002825 Տնօրեն Կ. Ղազարյան ---------- (ստորագրություն) Կ.Տ.